ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 222- Ա

04 մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 1474-Ն որոշման պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության դիարանի նորակառույց մասնաշենքը՝ 96,686,058 դրամ սկզբնական արժեքով, ներդնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի մայիսի 8-ի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին» N 92-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) կանոնադրության 4.2 կետի 1-ին պարբերության մեջ «64 060 000» /վաթսունչորս միլիոն վաթսուն հազար/ բառերը փոխարինել «160 750 000» /մեկ հարյուր վաթսուն միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ բառերով և «6406» /վեց հազար չորս հարյուր վեց/ բառերը փոխարինել «16075» /տասնվեց հազար յոթանասունհինգ/ բառերով

2) կանոնադրության 4.2 կետի 2-րդ պարբերության մեջ «6406» /վեց հազար չորս հարյուր վեց/ բառերը փոխարինել «16075» /տասնվեց հազար յոթանասունհինգ/ բառերով:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին (Ա. Վ. Կարապետյան)՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱԿԴԻՐ

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կազմված է
բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
օրինակ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2016թ. Մարտի 4 -ի
N 222 - Ա որոշմամբ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

---------- Ռ. Գրիգորյան

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից
21.05.2009թ
գրանցման թիվ 222.120.01104
Վկայական 03Ա 085191
ՀՎՀՀ 08417304
21.05.2009թ. գրանցված
կանոնադրության թիվ 2-3
փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 160 750 000 (մեկ հարյուր վաթսուն միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ, որը կազմում է 16075 (տասնվեց հազար յոթանասունհինգ) հատ 10000 (տասը հազար) դրամ, անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:
Ընկերության թողարկված բոլոր 16075 (տասնվեց հազար յոթանասունհինգ) բաժնետոմսերը տեղաբաշված են, սեփականության իրավունքով, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:
Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային:

Սույն փոփոխությունը հանդիսանում է <<Գավառի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 21.05.2009թ գրանցման թիվ 222.120.01104, վկայական 03Ա 085191) բաղկացուցիչ մասը: